ՏԱՐԵԳԻՐՔ ԿԱՄԵՆԻՑԱՅ

1430. Թվ. Ֆռանգաց ՌՆԼ. վախճանեցաւ Ռնեազ Վիդուլդ, որ էր քաջ և արի ընդդէմ թշնամեաց իւրոց. զոր և զԴադարն (Թաթարք) մինչեւ իւր դախ-դըն (աթոռ տէրութեան՝) որ կոչի Ղրիմն, մինչեւ ի այն հալածեաց և կո-տորեաց, և զ՝ 20,000 Դադարն գերի վարեց, և երեր ի այսմ Լիդվայի եր-կիր (Լիդուանիա), և անդ բնակեցոյց զնոսա. որք են այժմ ի Վիլնային գաւառն՝ այնոքիկ են, յօրէն յայնմանէ։

1434. Թվ. Ֆռանգաց ՌՆԼԳ. Եկայլոյ (Եակելլոն) էառ զՄահրաց երկրին զդախթն. այս Եկայլոյ երեք եղբայր ունէր, Վեդուլդ, Շվիտրհայլոյ և Կո-րէկալ։

1444. Թվ. ՊՂԳ. Կամենիցս ջրհեղեղ եկաւ, և զբերդն աւերեց, և զՋըրա-զացքն տարաւ. և շատ պակասութիւն արաւ աշխարհի. մարտի 22, օրն կիրա-կի, ի պարսնութեան Տիտրիխին։ Եւ ի նոյն ամին խաբեց Մանայիլն զԻլանին (Լեհք), և կամեցաւ զբերդն տալ, և ոչ ետուր։

1448. Թվին. ՊՂԶ. Նստաւ ի թագաւորութիւն Քազիմիր (Զ) թագաւորն, որ էր հայրն Զիկմոնդին. և վախճանեցաւ ՋԽԱ. (1492)։

1450. Թվ. ՊՂԹ. Մեծ կռիւ արաւ Եկայլոյ ի հետ Բրուսին. և յաղթե-ցին զԲրուսն։

1454. Թվն. ՌՆԾԴ. Գազմիր թագաւորն կռիւ արար ի Վոյնցային տակն։

1467. Թվ. ՋԺԶ. Ծնաւ Զիկմոնդ թագաւորն. որ է որդի Գազիմիր թագա-որին, յունուարի առաջին օրն, որ է նոր տարի։

1475. Թվ. ՋԻԴ. Տաճիկքն զԱեչովն այրեց. զոր յետոյ Շտեֆան վոյվո-տան զիւրեանք կոտորեց մինչ իսպառ։

1475. Թվ. ՋԻԴ. Տաճիկ ազգն էառ զԿաֆա՝ ի ձեռաց Ֆռանգացն ազգին։

1483. Թվ. ՋԼԲ. Ան ազգն Տաճիկ էառ ի քրիստոնէից ձեռացն զԿիլին (Քիլիս) և զԱքքէրմանն։

1484. Թվ. ՋԼԳ. Եկաւ Թուրքն և զԿիլին և զԱքքէրմանն էառ իւր ձե-ռաց տակ։